CONVERSE BANK

TRUSTED BY GENERATIONS

«03» 07 2026

№ CCD/1830

Հավելված 2
«ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/53»* ծածկագրով
էլեկտրոնային աճուրդի հրավերի

ԵՐԱՇԽԻՔ N CCD/1830

1. Սույն երաշխիքը, ինչպես նաև սույն երաշխիքի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում են ՀՀ առողջապահության նախարարության (այսուհետ՝ բենեֆիցիար) կողմից թիվ ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/53 ծածկագրով «ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ՝ «ՄԱՍԻՍԻ ԲԿ» ՓԲԸ ՀԱԳԵՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԲԺՇԿԱԿԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՅՏԱՐԱՐՎԱԾ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴԻՆ» **/Չափաբաժին 1/** «ԱՐ.ՄԵԴՏԵԽՆԻԿԱ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ պրինցիպալ) մասնակցելուց բխող՝ նույն ծածկագրով հրավերով սահմանված պարտավորությունների (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ) կատարման ապահովում:

2. Երաշխիքով «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել **2,100,000.00 (երկու միլիոն մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ** (այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է բենեֆիցիարի ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն 900008000466 հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է թողարկման պահից և ուժի մեջ է մինչև բենեֆիցիարի կողմից թիվ ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/53 ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգին մասնակցելու նպատակով պրինցիպալի կողմից հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալու օրվանից հաշված **մեկ հարյուր քսաներորդ** աշխատանքային օրը ներառյալ, սակայն ոչ ուշ քան 29.01.2027թ.-ը ներառյալ: Սույն երաշխիքի տրամադրման փաստի վերաբերյալ տեղեկատվությունը՝ երաշխիքի համարը, տրամադրող բանկի անվանումը և սույն երաշխիքի 1-ին կետում նշված ծածկագիրը՝ առանց գումարի չափի մասին նշման, երաշխիք տվող անձը երաշխիքը տրամադրելու օրը իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկում է սույն կետում նշված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի՝ armine.galustyan@mail.ru էլեկտրոնային փոստի հասցեին:

6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում է հայտը մերժելու մասին գնահատող հանձնաժողովի նիստի արձանագրության պատճենը և երաշխիքը:

7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալուց հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝

1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.

2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:

10. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Հարգանքով,

Իրավասու անձ

«Կոնվերս Բանկ» ՓԲԸ, 00000291, ք. Երևան, Վ. Սարգսյան 26/1, Վարկային գործառնությունների համար
Իրավասու անձ
Authorized person
Աննա Առաքելյան
Anna Arakelyan
ստորագրություն / signature
For Credit Operation
"CONVERSE BANK" CJSC, 00000291, 26/1 V. SARGSYAN str., YEREVAN

*Պատասխանատու՝ Նարինե Ղալումյան/Ներքին հեռախոսահամար՝ 2225*

«Կոնվերս Բանկ» ՓԲԸ
ՀՀ, 0010, ք. Երևան, Վ. Սարգսյան 26/1
+374 10 511 211

Converse Bank CJSC
26/1 V. Sargsyan, Yerevan, 0010, RA
+374 10 511 211
conversebank.am

03313